ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/196

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.07.2021թ. թիվ 26/26/11884-2021 գրությամբ «Արմտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի 16.07.2021թ. թիվ ԵԱ-496-ել գրության հիման վրա, 26.07.2021թ. թիվ 26/26/11884-2021 գրությամբ նախաձեռնել է «Արմտեքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արմտեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմտեքս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմտեքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/196 ընթացակարգի շրջանակներում 30.07.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.07.2021թ. թիվ ԵԱ-496-ել գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արմտեքս» ՍՊԸ-ի միջև 12.04.2021թ. կնքված «ԵՔԵԱ-ԳՀԱՊՁԲ-21/1-2» ծածկագրով կնքվել է հատուկ հանդերձանքի և պարագաների մատակարարման պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ ընկերությունը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո 25 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել 368 հատ սվիտեր:

«Արմտեքս» ՍՊԸ-ն չի իրականացրել վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7 կետի բ) ենթակետը, «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է և համապատասխան ծանուցումը հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/196 ընթացակարգի շրջանակներում 30.07.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արմտեքս» ՍՊԸ-ի միջև 12.04.2021թ. կնքվել է «ԵՔԵԱ-ԳՀԱՊՁԲ-21/1-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված

կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 25 օրացույցային օրվա ընթացքում:

3. «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ն «Արմտեքս» ՍՊԸ-ին ուղղված 14.07.2021թ. թիվ ԵԱ-491-ել ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«12.04.2021 թվականին կնքված «ԵՔԵԱ-ԳՀԱՊՁԲ-21/1-2» ծածկագրով պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը Ձեր կողմից չի իրականացվել:

Օգտվելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7 կետի բ) ենթակետով ամրագրված մեր իրավունքից, ինչպես նաև հաշվի առնելով մեր կողմից 30.06.2021թ. Ձեզ հղված N ԵԱ 430 ԵԼ ծանուցումը, վերոգրյալ պայմանագիրը 13.07.2021 թվականից միակողմանի լուծվում է:

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը, տեղեկատվությունը կտրամադրվի ֆինանսների նախարարությանը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 15.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.07.2021թ. թիվ 26/26/11884-2021 գրությունը, «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի 16.07.2021թ. թիվ ԵԱ-496-ել գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արմտեքս» ՍՊԸ-ի միջև 12.04.2021թ. կնքվել է «ԵՔԵԱ-ԳՀԱՊՁԲ-21/1-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և

հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 25 օրացույցային օրվա ընթացքում:

«Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ն «Արմտեքս» ՍՊԸ-ին ուղղված 14.07.2021թ. թիվ ԵԱ-491-ել ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«12.04.2021 թվականին կնքված «ԵՔԵԱ-ԳՀԱՊՁԲ-21/1-2» ծածկագրով պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը Ձեր կողմից չի իրականացվել:

Օգտվելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7 կետի բ) ենթակետով ամրագրված մեր իրավունքից, ինչպես նաև հաշվի առնելով մեր կողմից 30.06.2021թ. Ձեզ հղված N ԵԱ 430 ԵԼ ծանուցումը, վերոգրյալ պայմանագիրը 13.07.2021 թվականից միակողմանի լուծվում է:

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը, տեղեկատվությունը կտրամադրվի ֆինանսների նախարարությանը»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 15.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>5 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «Արմտեքս» ՍՊԸ-ն իր և «Երևան Ավտոբուս» ՓԲԸ-ի միջև 12.04.2021թ. կնքված Պայմանագրով նախատեսված 368 հատ հատուկ հանդերձանք և պարագաներ (սվիտեր) ապրանքի մատակարման ժամկետը խախտել է 5 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արմտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.07.2021թ. թիվ 26/26/11884-2021 գրությամբ «Արմտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմտեքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**